50-ՐԴ ՆԻՍՏ

25 դեկտեմբերի 1918թ.

Նիստը բացվում է երեկոյան ժ. 7-ին, նախագահությամբ *Ա. Սահակյանի.* Ներկա են Մինիստր-նախագահը, արտաքին գործոց, խնամատարության, ֆինանսների, իրավարարության և լուսավորության մինիստրներն ու պետական կոնտրոլյորը:

Սոց. դեմ[ոկրատների] ֆրակցիան առաջարկում է պատերազմի խնդիրը վերաքննության ենթարկել հենց այսօրվա նիստին: Խնդիրը սկզբունքով ընդունվում է և թողնվում է նախագահության՝ ֆրակցիաների հետ համաձայնելով, դնել օրակարգի մեջ:

Արտաքին գործոց մինիստր - Կարդում է հեռագիրները, որ վերաբերում են պատվիրակության գնալուն:

Վ. Տեր-Թորոսյան - Զեկուցում է կոոպերատիվների միության վարչությանը փոխարինաբար 200 հազար ռ. մեկ տարով, 5 տոկոսով տալու օրինագծի մասին:

Ընդունվեց շտապողականությունը: Բոլոր ֆրակցիաներն էլ արտահայտվեցին հօգուտ տալուն:

Օրինագիծը Դ. ընթերցումով ընդունվեց՝ անցնելով դաշնակցական ֆրակցիայի բանաձևը՝ ֆինանսների մինիստրության անունով 200 հազար ռ. վարկ բաց անել պետական բանկից, 5 տոկոսով և մի տարի ժամանակով՝ պարտք տալու Երևանի նահանգի կոոպերատիվների միության վարչության:

Ս. Տեր-Մարտիրոսյան - Զեկուցում է կառավարության առաջարկը՝ դեկտեմբեր ամսվա ռոճիկները տալու մասին:

Որոշվում է թույլ տալ կառավարության՝ վճարել ռոճիկները նախահաշիվների սահմանում:

Նույնը զեկուցում է բյուջեի մասին:

Այդ զեկուցումը ընդունվում է իբրև բացատրության թուղթ՝ անցնելու նախահաշիվների քննության առանձին-առանձին:

Նույնը զեկուցում է ֆինանսների մինիստրի կողմից սմետաներ կազմելու համար առաջարկված ընդհանուր հիմունքների մասին:

Գ. ընթերցումով ընդունվում և հանձնվում է օրենսդրական և խմբագրական հանձնաժողովներին:

Նույնը զեկուցում է փոստ-հեռագրական տարիֆը բարձրացնելու և Վրաստանի հետ կոնվենցիա կազմելու մասին:

Որոշվում է քննել միայն տարիֆի հարցը, այն էլ հաջորդ նիստին:

Նախագահ - Կարդում է գեներալ Սիլիկովի պատասխան հեռագիրը խորհրդարանի հեռագրին՝ ռազմաճակատից:

Մուսուլմանական ֆրակցիայի հարցապնդումը՝ հայտնի՞ է կառավարության, որ մի խումբ թուրքերի (6 հոգի) ներքին գործոց մինիստրը կարգադրել է ադմինիստրատիվ ձևով արտաքսել Հայաստանի սահմաններից դուրս մեկ տարով:

Մինիստր-նախագահ - Ոչ միայն 6 հոգի թուրքերի, այլև 9 հայի վերաբերմամբ է եղել կարգադրություն, սակայն պարզվեց, որ մի հասարակ ու պարզ թյուրիմացության արդյունք է եղել, հետևապես և բոլոր նրանք ազատ են արտաքսվելուց:

Նիստը փակվեց գիշերվա ժ. 12-ին:

«Զանգ», 15 հունվարի 1919թ.